Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Central project management agency

#EU4Youth

EU4Youth – ավելի քան 1,700 երիտասարդ Հայաստանում ստացել են աջակցություն՝ հմտությունների զարգացման, զբաղվածության և կայուն ապագայի համար

Աշխատաշուկայում հաջողությամբ ինտեգրվելու, ժամանակակից պահանջներին համապատասխանելու և պահանջարկ ունեցող հմտություններ ձեռք բերելու համար կարևոր են այն նախաձեռնություններն ու ծրագրերը, որոնք կրթում, զորացնում և աջակցում են երիտասարդներին՝ նոր մասնագիտական ու տնտեսական կարողություններով զինվելու ճանապարհին: EU4Youth ծրագիրը նշանակալի ազդեցություն է ունեցել Հայաստանում՝ հարյուրավոր երիտասարդների հնարավորություն ընձեռելով կատարելագործելու իրենց հմտությունները, բացահայտելու տնտեսական ներուժը և իրենց սոցիալական գաղափարները վերածելու իրական գործողությունների:

Հունիսի 23-ին Երևանում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված ծրագրի շրջանակներում դրամաշնորհային նախաձեռնությունների ավարտին և Ազգային ղեկավարող խմբի լիազորությունների փոխանցմանը: Միջոցառման նպատակն էր խթանել ծրագրի տարբեր բաղադրիչներով ձեռք բերված արդյունքների փոխանակումը, ինչպես նաև ընդարձակել ապագա համագործակցության և աջակցության ուղիները:

Հայաստանում ԵՄ պատվիրակության ներկայացուցիչ Դավիթ Ավագյանը նշում է. «Երիտասարդակենտրոն նախաձեռնությունները Եվրոպական միության ռազմավարական առաջնահերթություններից են: Այս նախաձեռնությունը ևս վկայում է ԵՄ-ի շարունակական հանձնառության մասին՝ աջակցել երիտասարդներին՝ հատկապես տնտեսական զարգացման խթանման և սոցիալական ընդգրկման կարևոր ուղղություններով»:

Ազգային ղեկավարող խմբի կառուցվածքը նպատակ ունի խթանել երկխոսությունը՝ երիտասարդների աշխատաշուկայում մրցունակությունը բարձրացնելու ուղղությամբ և միաժամանակ հանդես գալ որպես ծրագրի արդյունքների ու գործիքների հիմնական շահառու: Խմբի նախագահությունն ստանձնել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, փոխնախագահությունն՝ Երիտասարդական կազմակերպությունների միությունը, իսկ Մշտական քարտուղարության դերը՝ Միավորված սոցիալական ծառայությունը: Այս երեք մարմինները համատեղ կազմում են ղեկավարող խորհուրդը:

Լիտվայից Կենտրոնական Ծրագրերի Կառավարման Գործակալության (CPVA) ներկայացուցիչ Օստեյա Վիլֆելիտեն, խոսելով ծրագրի նպատակների ու ազդեցությունների մասին, նշում է. «*EU4Youth* ծրագրի միջոցով մեր նպատակն էր երիտասարդներին զինել իրական գործիքներով՝ իրենց ապագան կերտելու համար: Սոցիալական ձեռնարկատիրությունը նրանց հնարավորություն է տալիս համայնքների հանդեպ հոգատարությունը վերածելու իրական, տեսանելի գործողությունների:Այս նախագիծը վկայում է, որ Հայաստանի երիտասարդությունն ունի այն ուժը էներգիան, գաղափարները ու խիզախությունը փոփոխություն բերելու համար: Մենք նրանց կողքին ենք այս ճանապարհին՝ սկսած դպրոցում ծնված գաղափարներից մինչև նախաձեռնություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ողջ տարածաշրջանի վրա»:

Վերջին 2 տարիների ընթացքում Հայաստանում իրականացվել է երեք տարածաշրջանային դրամաշնորհային ծրագիր, որոնք ընդգրկել են ավելի քան **1,708** երիտասարդների՝ հնարավորություն ընձեռելով զարգացնել իրենց կարողությունները, մասնագիտական և թվային հմտությունները, մասնակցել վերապատրաստումներին, ստանալ մենթորական աջակցություն և ֆինանսավորում՝ իրենց գաղափարները իրականացնելու համար:

- Մասնակիցների **68%**-ը կանայք են, իսկ **62%**-ը՝ խոցելի խմբերից, ինչը վկայում է ծրագրի ընդգրկունության և հավասար հնարավորություններ ապահովելու հանձնառության մասին: Հմտությունների զարգացման բաղադրիչում 65% մասնակիցները մասնակցել են թվային ուսուցման, իսկ մնացածը՝ սոցիալական ձեռնարկատիրության և ակտիվ քաղաքացիության վերաբերյալ դասընթացների:
- **100** հաշմանդամություն ունեցող երիտասարդ ստացել է մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն, իսկ 29 մասնագետ վերապատրաստվել է որպես կարիերայի խորհրդատու:
- **10** երիտասարդական հասարակական կազմակերպություն դրամաշնորհ է ստացել՝ երիտասարդների կարիերայի զարգացմանն աջակցելու համար:
- **16** երիտասարդ ձեռնարկատեր ֆինանսավորում է ստացել՝ իրենց բիզնես գաղափարները իրականացնելու նպատակով, իսկ 54-ը՝ տեխնիկական աջակցություն:
- **10** երիտասարդ հնարավորություն է ստացել մասնագիտանալ սոցիալական ձեռնարկություններում՝ ձեռք բերելով գործնական փորձ:
- Զարգացվել և կիրառվել են **24** ոչ ֆորմալ և **2** ֆորմալ կրթական գործիքներ, որոնք նպաստել են մասնակիցների ակադեմիական և մասնագիտական աճին:

CODE-SE Hub-ի տնօրեն Սուրեն Մխիթարյանը նշում է, որ EU4Youth-ը ոչ միայն ֆինանսական աջակցություն էր. այն նաև ներառում էր երկար տարիների փորձի փոխանցում, ծրագրի նկատմամբ տարբեր շահակիցների վստահության ձևավորում և համագործակցությունների ընդլայնում բազմաթիվ գործընկերների հետ:

«Մեր հիմնական նպատակը Հայաստանում աշակերտ-առաջնորդությամբ սոցիալական ձեռնարկությունների մոդելի խթանումն էր, երբ աշակերտները համագործակցում են դպրոցների հետ՝ իրականացնելու բիզնես նախագծեր, որոնք ոչ միայն եկամուտ են ապահովում, այլև լուծում են դպրոցներում կամ համայնքներում առկա հրատապ սոցիալական խնդիրներ: Ծրագրի շնորհիվ հարյուրավոր աշակերտներ, ինչպես նաև տասնյակ ուսուցիչներ ու վերապատրաստողներ վերապատրաստվել են, ստեղծվել են առցանց հարթակ և ուղեցույց, և համապարփակ կրթական ու մասնագիտական աջակցության արդյունքում Հայաստանում մեկնարկել են առաջին յոթ օրինակելի աշակերտ-առաջնորդությամբ սոցիալական ձեռնարկությունները: Այսպիսի նախագծերն իսկապես կարևոր են, քանի որ հնարավորություն են տալիս երիտասարդներին վաղ տարիքից սկսել ձեռնարկատիրական գործունեություն, ձեռք բերել փորձ, հավատալ սեփական կարողություններին, ուժեղացնել թիմային աշխատանքը, ստանալ եկամուտ և լուծել համայնքային կամ դպրոցական խնդիրներ: Այս փորձառությունները կարող են ունենալ երկարաժամկետ, դրական ազդեցություն նրանց ապագայի վրա»,- նշում է դրամաշնորհի շահառուն:

Միջոցառման ընթացքում շահակիցները քննարկեցին մի շարք կարևոր թեմաներ, այդ թվում՝ Հայաստանի պետական զբաղվածության ծառայություններին տրամադրված տեխնիկական աջակցության ամփոփ նկարագիրը, քաղաքական առաջարկները, գործողությունների ծրագրերը և ռազմավարությունները՝ երիտասարդների աշխատունակությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչպես նաև Ազգային ղեկավարող խմբի ապագա ուղղությունը և դրա անդամների դերակատարությունը՝ դրամաշնորհների արդյունքների կայունությունն ապահովելու գործում:

EU4Youth-ի երրորդ փուլը «Երիտասարդների զբաղվածություն և ձեռնարկատիրություն» նախաձեռնությունը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Լիտվայի Արտաքին գործերի նախարարության կողմից և իրականացվում է Կենտրոնական Ծրագրերի Կառավարման Գործակալության (CPVA) կողմից Արևելյան գործընկերության երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Ծրագիրը կշարունակվի մինչև 2025 թվականի կեսը և նպատակ ունի տրամադրել տեխնիկական աջակցություն պետական և ոչ պետական կազմակերպություններին՝ երիտասարդների գործազրկության խնդիրները հաղթահարելու և նրանց աշխատունակությունը բարձրացնելու համար: